

9347


Պրովեստները բոլոր յերկրմերի, միացե՛ք.

ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ԿԱՄՊԱՆԻԱ

Վ. Ի. ՊՐԻԵՈՂԿՈ

ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ ՀՈՒՇԱԹԵՐԹ
ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ

★



ԿՈՒՍԶՐԱՏ

1933

ՏԵՐԵՎԱՆ

3875 23.07.2013
7-93



38137-62

L1 DEC 2008
25 SEP 2006

ԿՈՒՏՆՏԵՆՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԽՈՐՀՏՆՏԵՆՍՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԻ, ՄՏԿ-ՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱՅԼ ԲԶԻԶՆԵՐԻ
ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՆՍՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ԵՏԱՊՈՒՄ

«Գյուղատնտեսության հետագա բարձ-
րացման և նրա սոցիալիստական վերակա-
ռուցման ավարտման համար պայքարելը
ներկայումս կուսակցության կարևորա-
գույն խնդիրն է հանդիսանում»:

Համ Կ(բ)Կ ԿԿ-ի և ԿՎՀ-ի հունվարյան
միացյալ պլենումի այս ցուցումը պետք է դրվի
գյուղական բջիջների հետագա վողջ աշխա-
տանքի հիմքում:

Այժմ արդեն յուրաքանչյուր բանվոր, կոլ-
տնտեսական և աշխատավոր մենատնտես գի-
տի, թե ինչպիսի նվաճումներ է ձեռք բերել
Խորհրդային Միության ընկ. Ստալինի գլու-
խավորած լենինյան ԿԿ-ի ղեկավարությամբ:

Բոլորի համար այժմ պարզ է, վոր գյու-
ղատնտեսության բնագավառում կուսակցու-
թյան ձեռք բերած հաջողությունները՝ կուլեկ-
տիվացման ավարտումը հիմնական գյուղա-
տնտեսական շրջաններում, վորի հետևանքով
«ԽՍՀՄ-ն մանր գյուղացիական յերկրից վե-
րածվեց ամենախոշոր հողագործության յերկ-
րի», — արդյունք են ինդուստրացման քաղա-

քականության, յերկրում ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը, այդ թվում նաև գյուղատնտեսությունը վերակառուցելու ընդունակ սեփական հզոր ինդուստրիալ բաղադրատեղծման քաղաքականության կիրառման:

Ընկ. Ստալինի ղեկավարութեամբ կուսակցությունը «ձեռք բերեց այն, վոր գյուղացիության փիթխարի մեծամասնության գիտակցության մեջ կոլտնտեսությունները դարձան տնտեսության ամենից ավելի ընդունելի ձևը»:

«Այժմ հարցը կոլտնտեսությունների լինելու կամ չլինելու մասին չէ, այդ հարցն արդեն լուծված է դրականապես: Կոլտնտեսություններն ամրացված են և դեպի հին, անհատական տնտեսություն տանող ուղին փակված է վերջնականապես» (Ստալին):

Ուստի, գյուղատնտեսության զարգացման տվյալ ետապում գյուղական բջիջների հիմնական խնդիրն է հանդիսանում գոյություն ունեցող կոլտնտեսությունների կազմակերպական տնտեսական և քաղաքական ամրացումը:

«Այժմ խնդիրն այն է, վոր պետք է կոլտնտեսություններն ամրացնել կազմակերպորեն, այնտեղից դուրս չալրտել վնասարարական տարրերին, իսկական, ստուգված բայլչևիկյան կադրեր ջոկել կոլտնտեսությունների համար և կոլտնտեսությունները դարձնել իրոք բայլչևիկյան» (Ստալին):

Գյուղական բջիջների ամբողջ ուղադրությունը պետք է դարձնել այն բանի վրա, վոր ամենակարճ ժամանակում լիովին վերացվեն գյուղի աշխատանքի բոլոր այն հիվանդություններն ու թերությունները, վորը բացառվ ընկ. Ստալինը Համ Կ(բ) ԿԿ-ի և ԿՎՀ-ի հունվարյան միացյալ պլենումում արտասանած իր պատմական ծրագրային ճառում:

Հարկավոր է հիշել, վոր 1933 թվականը՝ յերկրորդ բայլչևիկյան հնգամյակի այդ առաջին տարին, պետք է լինի գյուղատնտեսության վորակալան բարձրացման տարի, նորագույն, կատարելագործված տեխնիկայի յուրացման պաֆոսի տարի, ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում աշխատանքի արտադրողականության բարձրացման և ինքնարժեքի իջեցման համար իսկական բայլչևիկյան պայքար մղելու տարի, գյուղատնտեսության մեջ, ինչպես խորհանտեսություններում և կոլտնտեսություններում, այնպես էլ աշխատավոր մենատնտեսների տնտեսություններում բերքատվության բարձրացման համար համառ պայքար մղելու տարի:

Գյուղում բջիջների հերթական, մարտական խնդիրներն են հանդիսանում՝ կոլտնտեսությունների զտումը խորթ տարրերից (այդ թվում կուստոմս ունեցող ժուլիկներից), կոմունիստների ավանդարդային դերի զգալի ուժեղացումն արտադրության մեջ: Յեվ, այդ հի-

ման վրա, դարնանացանի ճիշտ կազմակերպումն ու անցկացումը:

Բարձրացնել բերքատվությունը հողի լավագույն մշակման միջոցով, բարձրացնել անասնապահության արդյունավետությունը, բարելավելով անասունների խնամքը և հաստատուն կերային բազա ապահովելով, կոլտնտեսականների մեջ հոգատար վերաբերմունք դաստիարակել հանրային, սոցիալիստական սեփականության նկատմամբ, նրան, առաջին հերթին ամբողջ կոլտնտեսական ակտիվին կազմակերպել պայքարելու ագրոտեխնիկայի տիրապետման համար, — այդպիսիք են գյուղական բջջի ամենօրյա աշխատանքի հիմնական հարցերը:

ԽՄԲՍԱԶՄԱԿԵՐՊՁԻ (ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՁԻ) ԴԵՐԸ ՄՏԿ-ՆԵՐԻ ՅԵՎ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂ-ԲԱԺԻՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԾԱՎԱԼԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

«Գյուղատնտեսությունը սոցիալիստական յեղանակով վերակառուցելու և կոլտնտեսականների վրա խորհրդային ազդեցությունն անընդհատ ուժեղացնելու ամենազլխավոր լծակն են հանդիսանում մեքենատրակտորային կայանները և խորհտնտեսությունները, վորպես սոցիալիստական հողագործության խոշորագույն ֆարքրիկաներ» (ընկ. Կադանովիչի ղեկուցման լուծիվ Համկ (բ) ԿԿ-ի և ԿՎՀ-ի հուն-

վարյան միացյալ պլենումի ընդունած բանաձևից):

Սակայն ՄՏԿ-ները և խորհտնտեսությունները, չնայած մեր գյուղատնտեսության տեխնիկական վերակառուցման գործում նրանց ունեցած վիթխարի նշանակության և «խոշորագույն կազմակերպական-տնտեսական դերին», տակավին անբավարար չափով են ապահովել ֆաղափաղ ազդեցությունը կոլտնտեսականների և խորհտնտեսությունների ու ՄՏԿ-ների բանվորների վրա:

ՄՏԿ-ների և խորհտնտեսությունների քաղաքական ղեկավարությունն ու դերն ուժեղացնելու, «կոլտնտեսություններում և խորհտնտեսություններում մեր բջիջների քաղաքական ու տնտեսական աշխատանքը վճռականորեն բարելավելու» համար ներկայումս ՄՏԿ-ներին և խորհտնտեսություններին կից կազմակերպված են հատուկ ֆաղրաժիմնիք:

Քաղբաժինների վրա ամենապատասխանատու խնդիրներ են դրված, նրանք պետք է ապահովեն կուսակցական վերահսկողությունը աշխատանքի բոլոր բնագավառներում և կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների ու ՄՏԿ-ների կյանքում:

Միանգամայն պարզ է, վոր իրենց վրա դրված խնդիրները քաղբաժինները կկարողանան կատարել միայն այն պայմանով, յեթե նրանց ռեալ ոգնություն ցույց տրվի գյուղի բոլոր կոմունիստների և առաջին հերթին ալ-

տիվի կողմից՝ հանձին խմբկազմակերպիչներ
ի և կուսկազմակերպիչների:

Մասսայական քաղաքական աշխատանքի
լայն ծավալման հիման վրա, կուսկազմակեր-
պիչը պետք է ոժանդակի քաղբաժինների շուրջը
համախմբելու կուսակցական, կոմյեբխական և
տնկուսակցական ամուր ակտիվ՝ լավագույն
կոլտնտեսականներին:

Քաղբաժնի ղեկավարությամբ կուսկազմա-
կերպիչը պետք է կազմակերպի կուսակցության
և կառավարության այն բոլոր միջոցառումների
լայն մասսայականացումը, վորոնք հետապն-
դում են գյուղատնտեսական արտադրության
հետագա բարձրացումը շրջանում, կոլտնտեսա-
կանների և խորհտնտեսությունների ու ՄՏԿ-
ների բանվորների նյութական բարեկեցության
բարձրացումը:

Կուսկազմակերպիչն իր աշխատանքի կենս-
րոնակետը պետք է դարձնի բանվորներին և կոլ-
տնտեսականներին սոցիալիստական վոգով,
աշխատանքի հանդեպ գիտակից վերաբերմունքի
վոգով դաստիարակելու խնդիրը, խորհտնտե-
սական և կոլտնտեսական մասսաներին համա-
խմբելով վճռական ու ամենաանխնա պայքար
մղելու ընդդեմ անփուլթ, փնասարարական վե-
րաբերմունքի՝ ինվենտարի նկատմամբ, ընդդեմ
տնկարգապահության և լողրության, կոլտնտե-
սականների և խորհտնտեսությունների ու ՄՏԿ-
ների բանվորների շարքերից վտարելով բոլոր

չվորդներին, կեղծ հարվածայիններին, վորոնք
նպաստում են դասակարգային թշնամուն:

Անհրաժեշտ է նույնպես կոլտնտեսական
մասսաների մեջ անխոնջ ու համառ բացատրա-
կան աշխատանք կատարել առանձին բրիգադի,
առանձին կոլտնտեսականի խնդիրներն ու շա-
հերը ամբողջ յերկրի սոցիալիստական շինա-
բարության շահերին ու խնդիրներին շողկա-
պելու ողղությամբ, ապահովելով կուսակ-
ցության և կառավարության բոլոր միջոցա-
ռումների լայն պրոպագանդը գյուղատնտեսու-
թյան տեխնիկական վերազինման ու բարձրաց-
ման բնագավառում:

Յուրաքանչյուր խմբկազմակերպիչ պետք
է հաստատորեն հիշի, վոր կոլտնտեսություն
կամ խորհտնտեսություն խցկված դասակար-
գային թշնամու հանդեպ հեղափոխական աչա-
լրջությունն ու բայլչեիկյան անհաշտվողա-
կանությունն ուժեղացնելով միայն կարելի յե
իրոք ամբացնել ՍՍՑԽՀ-ի կոլտնտեսություն-
ները և Միության առաջավոր կոլտնտեսու-
թյունների որինակով նրանց դարձնել իրոք
բայլչեիկյան:

ԽՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ (ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ)

ՍՏՈՐԻՆ ԿԱԴՐԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆ Ե

Կադրերի պրոբլեմը գյուղատնտեսության
բնագավառում սոցիալիստական շինարարու-
թյան տվյալ ետապի կենտրոնական պրոբլեմն
է հանդիսանում:

հնկ. Ստալինն իր ճառում հստակ կերպով բացատրեց այն վիթխարի նշանակութունը, վոր ունի կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների համար կադրերի ճիշտ ընտրությունը:

Յուրաքանչյուր կոմունիստ պարտավոր է հիշել՝

«Վոր պատասխանատվության ծանրության կենտրոնը այժմ առանձին գյուղացիներից փոխադրվել է կոլտնտեսության ղեկավարության, կոլտնտեսության ղեկավար կորիզի վրա» (Ստալին):

Այսօր մեր կոլտնտեսություններում քիչ չկան ամուր, ախիւվ, գործին նվիրված արտադրական աշխատողներ, կոլտնտեսական և խորհտնտեսական արտադրության կազմակերպիչներ:

Կուսկազմակերպչի առաջնակարգ պարտականությունն է հանդիսանում բրիգադում բանվորական և կոլտնտեսական ախիւվի աւուր կորիզ ստեղծելու խնդիրը:

Կուսկազմակերպիչը և կուսխմբակն ամբողջապես վերցրած, իրենց ամբողջ աշխատանքը պետք է կառուցեն անկուսակցական ախիւվին լայն չափով աշխատանքին մասնակից դարձնելու հիման վրա, վոչ մի դեպքում թույլ չտալով անկուսակցական ախիւվի հեղափոխական նախաձեռնության և ինքնադործունեյության սահմանափակում, նրան չբխապատելով

նրբազդաց, իսկական ընկերական վերաբերմունքով և հոգսով:

Խմբկազմակերպիչը պետք է ուշի ուշով ուսումնասիրի իր բրիգադին, ինչպես կուսակցականներին, այնպես էլ անկուսակցականներին, ճանաչի նրանցից յուրաքանչյուրին, աշխատի նրանց ճիշտ դասավորել արտադրության մեջ:

Խմբկազմակերպիչը պետք է ամենաաւտիվ մասնակցություն ունենա այն աշխատանքին, վոր կատարում է բջիչը կուսակցության և կոմյերիտմիության մեջ խցկված դասակարգային թշնամու գործակալներին յերևան հանելու ու մերկացնելու ուղղությամբ:

Խմբկազմակերպիչը պետք է աշալուրջ լինի և կարողանա ժամանակին յերևան հանել դասակարգային թշնամուն՝ կուլակներին, մենչիկներին, դաշնակներին և մուսավաթիստներին, վորոնք կոլտնտեսությունները, խորհտնտեսությունները և ՄՏԿ-ներն են խցկվել շնորհիվ այս կամ այն գյուղական բջիչ ոսորտունիստական բարեհոգության և դասակարգային հոտառության բթացման:

Խմբկազմակերպիչը (կուսկազմակերպիչը) պետք է պայքարի հակախորհրդային տարրերի դեմ, վորոնք՝

«Ձգաում են վնասարարություն կազմակերպել, փչացնում են մեքենաները, ցանքը կատարում են բաց տեղեր թողնելով, հախչտակում են կոլտնտեսական բա-

րիբը, քանդում են աշխատանքային կարգապահությունը, կազմակերպում են սերմացվի գողություններ, գաղտնի շտեմարաններ, հացամթերման սարքատափ» (ընկ. Կազանովիչի զեկուցման առթիվ ընդունած բանաձևից) :

Խմբկազմակերպիչը (կուսկազմակերպիչը) պետք է ամեն կերպ աշխատի բարձրացնել կոմունիստի և կոմյերիտականի ավանգարդային գերն արտադրության մեջ: Յուրաքանչյուր կոմունիստ և կոմյերիտական պետք է որինակելի հարվածային լինի բրիգադում և իր հետևից տանի կոլանտեսականների ու բանվորների անկուսակցական լայն մասսաներին արտադրական առաջադրությունների գերապատրման համար:

Խմբկազմակերպիչը (կուսկազմակերպիչը) պետք է բայլելիկորեն պայքարի կուսխմբակի առանձին անդամների կողմից ցուցաբերվող աշխատանքային թափթփվածության դեմ, բջջում դնելով բոլոր նրանց հարցը, ովքեր համառորեն չեն կամենում ուղղվել և իսկական կուսակցական դառնալ:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել կոմունիստներին ամեն կերպ արտադրության մեջ պահելու և արտադրության կարևորագույն բնագավառներում նրանց ճիշտ դասավորելու խնդրին, ամենից ավելի պատասխանատու մասնագիտությունները (բրիգադիր, պահեստապետ, հաշվետար,

ձեռնարկ, վոդոգոյ և այլն) ապահովելով կոմունիստների կայուն կադրերով կամ ստուգված ու գործունակ անկուսակցականներով:

Կուսկազմակերպիչը պետք է կազմակերպի իր բրիգադի անդամների վորակավորման բարձրացման աշխատանքը: Տեխնիկայի և ագրոտեխնիկայի տիրապետումը կոմունիստների ամենաառաջին պարտականությունն է արտագրության մեջ:

Կուսկազմակերպիչը պետք է նախաձեռնողը հանդիսանա բրիգադում տարրական ագրոտեխպրոպագանդ կազմակերպելու գործում, կազմակերպելով ամենապարզ տեխնոսուցումը և ագրոտեխնիկայի տիրապետման հատուկ պարապմունքներ կոմունիստներին ու կոմյերիտականներին համար: Նա պետք է բացատրի պարտադիր, ԽՍՀՄ կոչված հաստատուն ագրոմինիմումի նշանակությունը և հետևի նրա ճիշտ կատարմանը:

Կուսկազմակերպիչը կազմակերպում և ղեկավարում է սոցմրցումն ու հարվածայնությունը բրիգադում, կազմակերպում է ռացիոնալիզատորական և գյուտարարական առաջարկների հավաքման գործը և այլն:

Կուսկազմակերպիչն ապահովում է սոցմրցման և կնքված պայմանագրերի կատարման ինքնաստուգման արգյունքների սխտեմատիկ հաշվառումը, պրագևատրել է տալիս լավագույն հարվածայիններին, պայքար և ծավալում կեղծ հարվածայինների դեմ, խոս-

տիվ հետևելով այն կանոնների պահպանմանը, վորոնք մատնանշված են լողերերի դեմ պայքարելու մասին գյուղատնտեսական արտելի կանոնադրության լրացման մեջ (վոչ հարգելի պատճառներով աշխատանքի չգալու դեպքում՝ տուգանք մինչև հինգ աշխուր, իսկ յերկրորդ անգամ աշխատանքից հրաժարվելու դեպքում՝ վտարել կոլտնտեսությունից)։ Կուսակազմակերպիչը բանվորներին և կոլտնտեսականներին կազմակերպում է ոգնությունի ցույց տալու հետ մնացող բրիգադներին, հանդես է գալիս իրրև սոցիալիստական բուքսիթ կազմակերպելու, թույլ բրիգադների չեֆությունը վերցնելու դործի նախաձեռնողը և այլն։

Կուսակազմակերպիչը բրիգադիներին ոգնում է կարգի բերելու բրիգադի արտադրական խորհրդակցությունների աշխատանքը, նրանց ոգտագործելով բանվորների ու կոլտնտեսականների արտադրական ակտիվությունը բարձրացնելու, նրանց մասսայաբար հարվածայնության և ռացիոնալիզատորական շարժման մեջ ներգրավելու նպատակով։

Դաշտային աշխատանքների շրջանում կուսակազմակերպիչը աշխատում է բրիգադի կարճատև (5-10 րոպեյանոց) արտադրական խորհրդակցություններ գումարել՝ որվա առաջադրությունը քննարկելու, հանդիպական առաջադրելու, աշխատանքի արդյունքներն ամփոփելու համար և այլն։

Կուսակազմակերպիչը աշխատում է լիտվին

իրացնել տալ արտադրական խորհրդակցությունների առաջարկները, ապահովելով նրանց կատարման սխեմամատիկ ստուգումը։

Կուսակազմակերպիչն ուսումնասիրում և կենսագործում է բարձրագույն կուսմարմինների վորոշումները, կազմակերպում է անկուսակցականների մեջ կուսակցական դիրեկտիվները լայնորեն մշակելու աշխատանքը։

Կուսակազմակերպիչի հիմնական խնդիրն է՝ կուսակցության յուրաքանչյուր լոզունգը, յուրաքանչյուր վորոշումը դարձնել բոլոր բանվորների և կոլտնտեսականների սեփականությունը, բայլևիկյան ազդեցությամբ ընդգրկել յուրաքանչյուր բանվորի և կոլտնտեսականի։

Իր աշխատանքը կառուցելով կուսակցության դիրեկտիվների հիման վրա, անչեղորեն կիրառելով կուսակցության գլխավոր գիծը և լենինյան ազդային քաղաքականությունը, կուսակազմակերպիչն ուշի ուշով ուսումնասիրում է յուրաքանչյուր բանվորի ու կոլտնտեսականի քաղաքական տրամադրությունները և, հենվելով առաջավոր հարվածային բանվորների և կոլտնտեսականների կուսակցական ու անկուսակցական ակտիվի վրա, պայքարում է ընդդեմ մանր-բուրժուական իդեոլոգիայի, ընդդեմ մեծապետական շովինիզմի և տեղական նացիոնալիզմի, ընդդեմ առանձին բանվորների և կոլտնտեսականների անառողջ տենդենցների։

բի, ընդդէմ դասակարգայնորեն թշնամի տար-
բերի կոլտնտեսութիւն խցկվելուն:

Կուակազմակերպիչը պետք է լայնորեն
մերկացնի կուլակային ագիտացիան, այն բո-
լոր առասպելներն ու լուրերը, վոր գյուղում
տարածում են խորթ, հակախորհրդային տար-
բերը:

Բրիգադում յեղած բոլոր քաղաքականա-
պես անառողջ տրամադրութիւնները կուսկազ-
մակերպիչը պարտաւոր է անմիջապես դնել
կուսխմբակի քննութիւնը, այդ մասին տեղե-
կացնել բջջին, անհրաժեշտ միջոցներ ձեռք առ-
նել մերկացնելու դասակարգային խորթ տրա-
մադրութիւնների կոնկրետ կրողներին:

ԽՍԲԱԱԶՄԱԿԵՐՊՁԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Յուրաքանչյուր խմբկազմակերպիչ պետք է
ակտիվ մասնակցութիւն ունենա կոլտնտեսու-
թյան, խորհանտեսութեան կամ ՄՏԿ-ի գալ-
նանացանի նախապատրաստութեանը, այդպի-
սին սկսելով բրիգադային արտադրական պլան-
ների կազմութեան ընթացքի ստուգումից:

Ընկ. Ստալինն ընդգծեց կոլտնտեսային
պլանավորման վճռական նշանակութիւնը:

«Կոլտնտեսութիւնը խոշոր տնտեսու-
թիւն է, բայց խոշոր տնտեսութիւնը չի
կարելի վարել առանց պլանի: Հողագոր-
ծութեան մեջ հարյուրավոր, իսկ յերբեմն
հազարավոր տնտեսութիւններ ընդգր-

կող խոշոր տնտեսութիւնը կարելի չե
վարել միմիայն պլանային ղեկավարու-
թեան կարգով: Առանց դրա նա կկործանվի
և կտապալվի» (Ստալին, «Գյուղի աշխա-
տանքի մասին»):

Անցյալում արտադրական պլան կազմելու
աշխատանքը մեծ մասամբ կատարվում եր ա-
ռանց ընդհանրապես կոլտնտեսութիւնների և
մասնավորապես կոմունիստների վորեւէ մաս-
նակցութեան: Պլանները կազմում եյին յեկ-
վոր ագրոնոմները, և լավագույն դեպքում նրա
մշակմանը մասնակցում եյին միայն կոլտնտե-
սութեան նախագահը և վարչութեան անդամ-
ները: Սակավ չեյին դեպքեր, յերբ պլանը
հարկ յեղածին պես չեր քննարկվում կոլտնտե-
սականների ընդհանուր ժողովներում:

Արտադրական պլաններ կազմելու այդպի-
սի մեթոդն, իհարկե, չեր կարող լավ արդիւնք-
ներ տալ և դրա համար ել շատ կոլտնտե-
սութիւններում պլանները վորչ-միշտ ոպերա-
տիվ փաստաթուղթ և աշխատանքի ղեկավա-
րութիւն եյին հանդիսանում:

Պլանները կազմելիս հատուկ ուշադրու-
թիւն պետք է դարձնել այն յեղակետային
մոմենտներին, վորոնք պետք է դրվեն արտա-
դրական պլանների կազմութեան հիմքում: Ինչ-
պես հայտնի յե, յեղակետային են հանդիսա-
նում արտադրանքի նորմաները, աշխորերի
գնահատումը, շրջանային հողաբաժինների

(18687 / 38137 2)



սլանային առաջադրութիւնները և հաշվային ու վիճակագրական բնութիւն ալ տվյալները:

Արտադրանքի նորմաները վերոշէլիս հարկաւոր և խուսափել մեխանիկորեն փոխադրելու հանրապետական ու շրջանային հողային կազմակերպութիւններից տեսցվող նորմաները: Արտադրանքի նորմաները պետք և համապատասխան են յուրաքանչյուր կոլտնտեսութեան և յուրաքանչյուր առանձին հողամասի կոնկրետ պայմաններին: Նրանք պետք և ուշի ուշով քննարկվեն տվյալ կոլտնտեսութեան ամբողջ աշխատանքի և հարվածայինների աշխատանքի փորձի հիման վրա, ընդ վորում թույլ տալով, վոր սահմանվեն ինչպես չափազանց վաճ, միջակ կոլտնտեսականի ուժերից բարձր նորմաներ, այնպես ել այնպիսի նորմաներ, վորոնք բացահայտորեն նվազեցրած են և հակասում են աշխատանքի արտադրողականութեան բարձրացման մասին կուսակցութեան տված դիրեկտիվներին:

Ձեռնամուխ լինելով արտադրական սլան կազմելու աշխատանքին, կուսակազմակերպիչն առաջին հերթին պետք և ստուգի, թե հավաքված և արդյոք ամբողջ սերմացուն, վորն անհրաժեշտ և նախագծված ցանքսն ապահովելու համար:

Կուսակազմակերպիչը պետք և կոլտնտեսականների լայն մասսաներին բացատրի, վոր սերմացուն պետք և հավաքել ինչ զնով ուղում և լինի, վոր չի կարելի հույս դնել, թե պետու-

թյունը սերմացվով ոգնություն ցույց կտա:

Սերմացվի հավաքման շուրջը կատարի դասակարգային պայքար և մղվում, կուլակը փորձում և կոլտնտեսականներին պրովոկացիայի յենթարկել սերմացուն թաղցնելու, փչացնելու, տեսակավոր սերմը խառնելու և այլ ուղղութեամբ: Կուսակազմակերպիչի խնդիրն և՛ մերկացնել թշնամուն և նրան լույս աշխարհ հանել, կոլտնտեսական ակտիվի հետ միասին աշխատել լրիվ հավաքել ամբողջ սերմացուն (այդ թվում նաև ապահովագրական ֆոնդը), ապահովել նրա լիակատար պահպանումը, վաղորդ, նախքան ցանքսն սկսելը սերմացվի զտման և ախտահանման աշխատանքը ծավալել:

Ինչքան լավ և սերմացվի վորակը և ինչքան շատ և տեսակավոր ցանքսը, այնքան բերքը բարձր և լինում: Ուստի սերմֆոնդը հավաքելիս անհրաժեշտ և հատուկ ուշադրություն դարձնել հավաքվող սերմացվի վորակին, ցանքսերի համար ջոկելով լավագույն սերմացուն, վատ սերմացուն փոխարինելով բարձրորակ տեսակներով: Տեխնիկական կուլտուրաների (բամբակ և այլն) սերմացուն պետք և դործարանից ժամանակին ստանալ և բաժանել առանձին բրիգադներին, վորոնք պետք և ժամանակին հասցնեն աշխատանքի վայրը և ժամանակին թրջեն:

Բոլոր կոլտնտեսականները և խորհանտեսութիւնների բանվորները գիտեն, թե բերքատվութեան բարձրացման համար ինչպիսի

նշանակութիւնն ունի ցանձաշրջանառութեան ամրացումը:

Ընկ. Յակովլեւը ԽՍՀՄ Կենտրոնականին ԽՍՀՄ նստաշրջանում տված իր զեկուցման մեջ ասաց, վոր ամենուրեք ցանձաշրջանառութիւնն մըտցնելը յուրաքանչյուր հեկտարի բերքը կալելացնի առնվազն մեկ ցենտներով: Իսկ տեխնիկական կուլտուրաների համար (որինակ՝ բամբակ, ծխախոտ և այլն) ցանձաշրջանառութեան նշանակութիւնն ե՛լ ավելի մեծ է: Կուսակազմակերպիչն առաջիկա զարնանացանի կամպանիայի ընթացքում պետք է հետևի 1933 թվին բոլոր կոլտնտեսութիւններում և խորհտնտեսութիւններում պարտադիր կերպով ցանձաշրջանառութիւնն մտցնելու մասին կուսակցութեան և կառավարութեան տված դիրեկտիվներէ կատարմանը:

Անհրաժեշտ է ցանձաշրջանառութեան հարցը ՄՏԿ-ների ագրոնոմներէ հետ միասին ուշի ուշով մշակման յենթարկել, ագրոմիշոցառումներէ կոնկրետ պլան մշակել, նշել բերքատուութեան կոնտրոլ թվերը, այն հասցնելով յուրաքանչյուր կոլտնտեսականի, վորին դրա հետ միասին բացատրել, վոր բերքատուութեան բարձրացումը բրիգադի լավ աշխատանքի հետեանքով կբարձրացնի նաև աշխորի գնահատումը:

Բացատրելիս կուսակազմակերպիչը պետք է ընդգծի, վոր միմիայն ցանձաշրջանառութիւնն մտցնելով բերքատուութիւնը չի բարձրանա:

Ցանձաշրջանառութիւնն այն ժամանակ միայն լավ արդիւնքներ կտա, յեթե միաժամանակ խստիվ պահպանվեն բոլոր մյուս արդրոմիշոցառումները (ժամանակին ցանել, կրճատել աշխատանքների ժամկետները, հողը խնամքով մշակել, պայքարել մոլախոտերի դեմ, ժամանակին ջրել, պայքարել վնասատուների դեմ և այլն):

Բերքատուութեան բարձրացման կարևորագույն պայմաններէց մեկն է հանդիսանում աշխատանքի ճիշտ կազմակերպումը և մշտական բրիգադի հետադա ամրացումը:

ԽՍՀՄ Կենտրոնականին 3-րդ նստաշրջանը 1933 թվի հունվարի 30-ի իր վորոշման մեջ սահմանեց, վոր «ցանձաշրջանառութեան առնչութեամբ, իբրև կանոն, ցանձաշրջանառութեան դաշտերում հողամասերն ամրացնել մշտական կոլտնտեսական դաշտավարական բրիգադներին ցանձաշրջանառութեան ամբողջ ժամանակամիշոցում»:

Կուսակազմակերպիչը պետք է իր բրիգադի կոլտնտեսականին բացատրի այդ վորոշման իմաստն ու նշանակութիւնը, վորոշում, վոր յուրաքանչյուր բրիգադին պարտավորեցնում է աշխատել վորոշ հողամասում յերկարատե ժամանակով, նրա դրութեան համար կրելով լիակատար պատասխանատուութիւն:

Կուսակազմակերպիչը բրիգադիւրի հետ միասին պետք է ուշի ուշով ուսումնասիրի ամբողջ հողամասը (թե առաջ ի՛նչ կուլտուրաներ

ենց ցանկել, ինչպես ե գաշտը պարարտացվել
և այլն), բրիգադիրին ոգնի հողամասը մոլա-
խոտերից անմիջապես մաքրելու (այրման և
այլ միջոցներով) աշխատանքում և այլն:

Յանքի շրջանում վճռական նշանակութուն
ունի տրակտորների և մյուս գյուղատնտեսա-
կան ինվենտարի վիճակը:

Լայնորեն մասսայականացնելով ԽՍՀՄ
Ժողկոմխորհի և Համ Կ(բ)Կ ԿԿ-ի վորոշումը
տրակտորների և գյուղատնտեսական մե-
քենաների վերանորոգման մասին, կուսկազմա-
կերպիչը պետք է միաժամանակ ուշադրու-
թյամբ հետևի վերանորոգման ընթացքին և
վերանորոգված ինվենտարի վորակին, ժամա-
նակին ազդանշելով թերությունների կամ
վնասարարական դեպքերի մասին բջջին և
խորհանտեսության կամ ՄՏԿ-ի դիրեկտորին:

Կուսկազմակերպիչը պետք է յերևան հա-
նի վատորակ վերանորոգման կոնկրետ մեղա-
վորներին, նրանց խարազանելով բանվորնե-
րի ու կոլտնտեսականների ընդհանուր ժողով-
ներում, և դրանով իսկ կոլտնտեսականներին
դաստիարակի հանրային, սոցիալիստական սե-
փականությունը պաշտպանելու և կուլակային
վնասարարության դեմ անխնա պայքարելու
վորով:

Հսկայական նշանակութուն ունի նաև կեն-
դանի քարշող ուժը ցանքսին նախապատրաս-
տելու համար:

Համ Կ(բ)Կ ԿԿ-ն և ԽՍՀՄ Ժողկոմխորհը

1933 թ. փետրվարի 12-ի վորոշման մեջ տվին
բանվոր անասուններին դարնանացանի համար
պատրաստելու ծավալուն ծրագիր: Կուսկազ-
մակերպչի պարտականությունն է՝ լայնորեն
բացատրել այդ վորոշման իմաստը բրիգադի
ընդհանուր ժողովում, ակտիվ մասնակցություն
ունենալ ձիապանների և յեղապանների աշխա-
տանքի համար ստուգված ու լիովին բարեխիղճ
կոլտնտեսականներ և բանվորներ ընտրելու գոր-
ծում (խորհանտեսություններում), դրանով
որենելով բրիգադիրին կենդանի մարդկանց ճա-
նաչելու իր ընդունակությամբ:

Կուսկազմակերպիչը պետք է հետևի հի-
շյալ վորոշման ճիշտ կատարմանը, ամենուրյա
վերահսկողության ներքո վերցնելով կերի
պահպանման կազմակերպման աշխատանքների
ընթացքը, ստուգելով, թե ինչքան ճիշտ է կա-
տարվում անասունների ոգտագործումը — ժա-
մանակին հանգստացնելը, ճիշտ խնամելը և
այլն:

ՄՏԿ-ների բջիջների կուսկազմակերպիչը
պետք է ապահովի, վոր տրակտորիստները ման-
րամասնորեն ծանոթանան ՄՏԿ-ների կատարած
աշխատանքի համար կոլտնտեսությունների
կողմից տրվող վարձատրության նոր մեթոդին
(նատուրայով՝ նայած բերքին), մանրամասնո-
րեն բացատրելով, թե ինչու այժմ ՄՏԿ-ների
վրա դրվում է «կոլտնտեսություններում աբ-
տադրության դրության անմիջական նյութա-
կան պատասխանատվությունը» և ինչպիսի

յեզրակացություններ են բղխում այդտեղից:

ՄՏԿ-ների աշխատողները պետք է զիտե-
նան, վոր այժմվանից նրանք բոլորն ել անմի-
ջապես չահագրդոված են լինելու կոլտնտեսու-
թյունների բերքատվության բարձրացման
խնդրով, վոր ՄՏԿ-ների սպասարկած կոլտն-
տեսությունների կողմից ագրոնոմիական կա-
նոնները պահպանելու համար անմիջապես պա-
տասխանատու յե ՄՏ կայանը և վոր վատ
աշխատանքը (նոսր վար, կոշտեր թողնել և
այլն) պատժվում և հանրային սեփականու-
թյան պաշտպանության վերաբերյալ որեւքի
հիման վրա (Պոգոստոսի 1932 թ.):

Առաջիկա գարնանացանի կամպանիայի
ընթացքում կուսակցությունը հիմնական շեշ-
տը դնում է վորակի վրա—«տնտեսությունն
ընդլայնելուց դեպի բերքատվության բարձ-
րացում»:

Առաջիկա գարնանացանի ընթացքում սո-
ցիալիստական հողագործության առաջ ծա-
ռացած խնդիրներն առանձնապես պատասխա-
նատու յեն: Դա պարտավորեցնում է յուրա-
քանչյուր կոմունիստի, յուրաքանչյուր կոմ-
յերիտականի լինել արտադրության ավան-
գարդում և իր հարվածային աշխատանքով, իր
խանդավառությամբ որինակ հանդիսանալ ան-
կուսակցական կոլտնտեսականների և բանվոր-
ների համար, նրանց վողեւորել հարվածայնո-
րեն կատարելու և զերակատարելու առաջա-
դրությունները, նրանց սոցմրցման մեջ ներ-

գրավելով, աշխատելով կոլտնտեսականներին
մասսայաբար ամրացնել այս կամ այն աշխա-
տանքներում և այլն:

Գյուղատնտեսական արտադրության մեջ
պակաս կարեւոր դեր չի խաղում կինը: Կուս-
կազմակերպչի խնդիրն է՝ համապատասխան
պայմաններ ստեղծել կանանց աշխատանքի
համար:

Կուսկազմակերպիչը պետք է այնպես կա-
ռուցի աշխատանքը կանանց մեջ, վոր կարո-
ղանա նրանց մոբիլիզացիայի յենթարկել կոլ-
տնտեսությունների կազմակերպական-տնտե-
սական խնդիրներին շուրջը: Նա պետք է լավա-
գույն կոլտնտեսությունների որինակի հիման
վրա ցույց տա, վոր աշխատանքի վորակի բա-
րելավումը և բերքատվության բարձրացումը
միևնույն ժամանակ նշանակում է յուրաքան-
չյուր կոլտնտեսականի ու կոլտնտեսուհու նյու-
թական բարեկեցության բարձրացում՝ մասնա-
վորապես: Կուսկազմակերպիչը պետք է դաշտա-
յին աշխատանքների ժամանակ կազմակերպել
տա մանկական հիմնարկներ (մսուրներ, հրա-
պարակներ և այլն), ինչպես նաև հասարակա-
կան սնունդը բրիզադում, իբրև կոլտնտեսու-
թյան արտադրական գործունեյության մեջ
կանանց մասնակցությունը հեշտացնող միջոց-
ներից մեկը:

Դաշտային աշխատանքների շրջանում
կուսկազմակերպիչը պետք է ամբողջ աշխա-
տանքը փոխադրի դաշտ, անմիջապես արտա-

դրութեան մեջ, քաղորեր, զրույցներ, թերթե-
րի ընթերցանություններ և նման այլ միջոցա-
ռումներ դործադրելով, այդ աշխատանքը սեր-
տորեն շաղկապելով արտադրական առաջա-
դրությունների կատարման խնդրի հետ: Այս
աշխատանքը կուսկազմակերպիչը պետք է կա-
ռուցի այնպիսի ձևերով, վորոնք ամենից ավելի
համապատասխանում են կոլտնտեսականների
զանազան միջնախավերի (կանանց, յերիտա-
սարդների և այլն) պահանջներին ու զարգա-
ման մակարդակին:

Խորհտնտեսութեան և ՄՏԿ-ի կուսկազմա-
կերպիչը արտադրական պլանների կատարման
ու գերակատարման համար բանվորական մաս-
սաներին կազմակերպելու աշխատանքը պետք է
զուգադիպի յուրաքանչյուր անհատին բանվորի
նյութական և կոլտուր-կենցաղային մակար-
դակի բարձրացման ուղղութեամբ լայնորեն
ծավալված աշխատանքի հետ, ձգտելով մաս-
նավորապես բարելավել բանվորական մատա-
կարարումը:

Կոլտնտեսականներին լայնորեն բացատրելով
հացահատիկի ու անասնապահական մթերքների
մթերման գոյութեան ունեցող կոնտրակտացիոն
սխտեմի վերացման և հացահատիկի, մսի ու
կաթի հանձնման հաստատուն պարտավորու-
թյունների սահմանման նշանակութեան ու
իմաստը, կուսկազմակերպիչը պետք է կոլտնտե-
սականներին մոբիլիզացիայի յենթարկի լիովին
կատարելու պետութեան առաջ հանձն առած

պարտավորութեանները, վորպես յուրաքան-
չյուր սոցիալիստական գյուղատնտեսական ար-
տադրութեան, յուրաքանչյուր կոլտնտեսակա-
նի առաջնահերթ խնդիր:

Ընթացիկ դարնանացանի կամպանիան անց
ե կենում կատաղի դասակարգային պայքարի
պայմաններում, բոլոր հնարավոր միջոցներով
ցանքի հաջող կիրառումը վիժեցնելու և կոլտն-
տեսութեանը քայքայելու փորձ անող կուլակ-
ների ու այլ հակախորհրդային տարրերի ուժե-
ղացող գրոհի պայմաններում:

Սակայն դասակարգային թշնամու կատա-
ղութեանից առաջացող այս բոլոր դժվարու-
թյունները կարելի չէ հաղթահարել, յեթե
գյուղական բջիջներն անմիջապես վերակառու-
ցեն իրենց աշխատանքն այն ցուցումների հի-
ման վրա, վորոնք տրված են ընդ.Ստալինի
պատմական ճառում և վորոնք գյուղի աշխա-
տանքի իսկական ծրագիր են հանդիսանում:

Իրենց աշխատանքն ընդ. Ստալինի ցու-
ցումների համապատասխան վերջնականապես
վերակառուցման յենթարկելով և միայն, վոր
գյուղի կուսակցական բջիջները հաջողու-
թեամբ կլուծեն յերկրորդ բայլեիկյան հնգա-
մյակի առաջին դարնանացանի խնդիրները և
սոցիալիստական գյուղատնտեսութեանը կհա-
նեն ավելի բարձր աստիճանի:

Կուսկազմակերպիչը պետք է հաստատորեն
հիշի, վոր, վերջին հաշիվով, յուրաքանչյուր գոր-
ծի հաջողութեանը լուծում է կենդանի մարդը՝

կոլտնտեսականը, խորհտնտեսության և ՄՏԿ-ի բանվորը:

Կոլտնտեսականների և խորհտնտեսություն-
թյունների ու ՄՏԿ-ների բանվորների դասա-
կարգային աչալընթյուն բարձրացումը, նրանց
մեջ դասակարգային թշնամու, կուլակի ար-
բանյակների, վնասարարների, գողերի, լող-
րերի և այլ հակախորհրդային տարրերի նկատ-
մամբ անհաշտվողականություն դաստիարակե-
լու աշխատանքը, ոպորտունիստական բարեհո-
գության և «ձախ» վարչարարության մերկա-
ցումը, կուսակցության գլխավոր գծի համար
բջջի մղած պայքարի հիման վրա, — կուսկազ-
մակերպիչների աշխատանքի այս բոլոր հիմնա-
կան խնդիրները կարող են հաջողությամբ լուծ-
վել, յեթե կուսկազմակերպիչը հենվի ամուր
համախմբված բանվորական կամ կոլտնտեսա-
կան ակտիվի վրա: Կոլտնտեսությունում, խորհ-
տնտեսությունում, ՄՏԿ-ում այդպիսի կո-
րիզ համախմբել կարելի չե այն ժամանակ
միայն, յերբ կուսկազմակերպիչը կարողանա
յուրաքանչյուր բանվորի և յուրաքանչյուր կոլ-
տնտեսականի համար ստեղծել նրանցից յուրա-
քանչյուրի պահանջների ու կարիքների նկատ-
մամբ ընկերական, նրբազգաց վերաբերմունքի
մթնոլորտ:

Դրա համար կուսկազմակերպիչը պետք է
նախ և առաջ իրազեկ լինի իր բրիգադի կյանքի
մանրուքներին: Կոլտնտեսականի սոցիալիս-
տական վերադաստիարակությանը պետք է զու-

ղընթաց լինի նրա կարիքների հոգատար բաշա-
րարումը, այս կամ այն կենցաղային հարցի
լուծման գործում ոգնություն ցույց տալը,
լավագույն, աչքի ընկնող աշխատողների խրա-
խուսումը և ծուլլերի, գործալիքների ու նման
տարրերի խիստ տուգանումը:

Կուսկազմակերպիչը պետք է հաշվի առնի,
վոր դասակարգային պայքարի սրումը միա-
ժամանակ ուժեղացնում է տատանման տարերը
կոլտնտեսականների մի մասում, վորպիսիք
արտահայտվում են մանր-բուրժուական թափ-
թրվածության, պոկողականության մեջ: Ուս-
տի, մասսայական աշխատանք կատարելուն
զուգընթաց, կուսկազմակերպիչը պետք է ու-
չադրությամբ հետևի յուրաքանչյուր տատան-
վող կոլտնտեսականի, նրան ավելի սերտ մո-
տենա, նրա հետ ավելի մանրամասն խոսի, ոգնի
նրան հաղթահարելու իր տատանումները և
դրանով իսկ նրան շուտ տա դեպի նվիրված կոլ-
տնտեսականների շարքերը, նրան պոկի դա-
սակարգային թշնամու ամուր ճանկերից:



Տեխն. խմբագիր՝ Մ. Եփրեկ

Սրբագրիչ՝ Ա. Տեր-Մկրտչյան

Հանձնված է արտադրության 4 ապրիլի 1933 թ.

Ստորագրված է տպագրելու 13 ապրիլի 1933 թ.

Տիրաժ 5000, Հրատ. № 100, 40 000 տպ. նժ.

Պետհրատի տպարան Պատվեր № 857 Գլավլիտ № 7733 (բ)

ՀՀ Ազգային գրադարան



NL0189047

190

ԳԻՆԸ 25 ԿՈՊ.

491
812



В. И. Приходько
Памятка парторга в период
весеннего сева.
Партиздат 1933 Эривань